

**«ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՍԻՆ»
ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՎ
«ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔՈՒՄ ՏԵՂԱԿԱՆ
ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ
ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ
ՄԱՍԻՆ**

ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՕՐԵՆՔԸ

**«ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ
ՄԱՍԻՆ»**

Հոդված 1. «Տեղական ինքնակառավարման մասին» 2002 թվականի մայիսի 7-ի ՀՕ-337 օրենքի 83-րդ հոդվածում լրացնել նոր 2.1-ին, 2.2-րդ, 2.3-րդ և 2.4-րդ մասեր.

«2.1. Յուրաքանչյուր տարի բյուջեի կատարման տարեկան հաշվետվության ստուգման նպատակով ավագանին պետք է ներգրավի աուդիտորական կազմակերպություն՝ բացառությամբ մեծամասնական ընտրակարգով ձևավորվող ավագանի ունեցող համայնքների՝ որտեղ ավագանին կարող է տարեկան հաշվետվության ստուգումն իրականացնել ավագանու անդամի (անդամների) և (կամ) աուդիտորական մասնագիտացված կազմակերպության միջոցով:

2.2. Աուդիտորական կազմակերպության ընտրությանը ներկայացվող պահանջները սահմանվում են ավագանու կողմից:

2.3. Աուդիտորական կազմակերպությունը բյուջեի կատարման տարեկան հաշվետվության ստուգման արդյունքներով պետք է կազմի աուդիտորական եզրակացություն, որը պետք է ներկայացնի ավագանուն:

2.4. Բյուջեի կատարման տարեկան հաշվետվության ստուգման արդյունքներով կազմված եզրակացության մեջ Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը և համայնքի գործունեությանն առնչվող այլ պայմաններին (պայմանագրերին և այլնին) անհամապատասխանությունների մասին տեղեկություններ հայտնաբերելու դեպքում ավագանին դիմում է համապատասխան իրավասու մարմինների:»:

Հոդված 2. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

Օ Ր Ե Ն Ք Ը

**«ԵՐԵՎԱՆԻ ԲԱՐՈՑՈՒՄ ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ
ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Հոդված 1. «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» 2008 թվականի դեկտեմբերի 26-ի ՀՕ-5-Ն օրենքի (այսուհետ՝ Օրենք) 82-րդ հոդվածի 4-րդ մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«4. Յուրաքանչյուր տարի բյուջեի կատարման տարեկան հաշվետվության ստուգման նպատակով ավագանին պետք է ներգրավի աուդիտորական կազմակերպություն:»:

Հոդված 2. Օրենքի 82-րդ հոդվածը լրացնել 4.1-ին, 4.2-րդ և 4.3-րդ մասերով հետևյալ խմբագրությամբ.

«4.1. Աուդիտորական կազմակերպության ընտրությանը ներկայացվող պահանջները սահմանվում են ավագանու կողմից:

4.2. Աուդիտորական կազմակերպությունը բյուջեի կատարման տարեկան հաշվետվության ստուգման արդյունքներով պետք է կազմի աուդիտորական եզրակացություն, որը պետք է ներկայացնի ավագանուն:

4.3. Բյուջեի կատարման տարեկան հաշվետվության ստուգման արդյունքներով կազմված եզրակացության մեջ Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը և համայնքի գործունեությանն առնչվող այլ պայմաններին (պայմանագրերին և այլնին) անհամապատասխանությունների մասին տեղեկություններ հայտնաբերելու դեպքում ավագանին դիմում է համապատասխան իրավասու մարմինների:»:

Հոդված 3. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից: